# ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻԻ ՔԱՆԻ ՄԸ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ

*Ներսէս ծառայ Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարգ համազգական Նախամեծար աթոռոյ առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ էջմիածնի։*

*Սրբազան Սահակ եպիսկոպոս վիճակաւորի վանից սրբազան առաջնորդին Թադդէոսի և վիճակին նորա ծանուցանեմք զի գրութիւնք ձեր առ մեզ ի 15 Դեկտեմբերի ամին անցելոյ միոյն համարաւ 246. յաղագս բարեկարգելոյ զեկեղեցիս Հայոց մերձակայ վիճակաց և շինութեանց ուսումնարանացն երկու սենեկացն ցկէսն և նշանելոյ ձեր յայցելութիւն Խօյեայ և Սալմաստու վիճակացն և գնալոյ ի Մակու արժանաւոր ընձայիւք խանին լսելոյ զգանգատանսն նորա ի ձեր նախորդէ հանգուցելոյ յաղագս ո՛չ հատուցանելոյ ինքեան զհարկ չորից ամաց գիւղին վանից որով նկատեալ լինի աղքատութիւն վանիցն և հանգուցեալ վիճակաւորին ընդհակառակն ձեր սրբազնութեան զանազան գրութեանց առ մեզ հետեւեցուցանելով այնմ գանգատանաց խանին և զայն գանգատանսն նորա իբրեւ թէ պակասութիւնք և աւերութիւնք վանիցն եղեալ են ի ձեռն երկուց եղբարցն Թադէոս քահանայի և Յովսէփ եղբօր նորա ի ձեռս որոց թողեալ է հանգուցեալ վիճակաւորն զամենայն զկառավարութիւն վանիցն ոյր աղագաւ չէ արարեալ հանգուցեալն զշինութիւն և չէ վճարեալ խանին զհարկ չորից ամաց զի որ ինչ լեալ է յափշտակեալ են յիշեալ երկուքին եղբարքն ըստ վկայութեանց բազմաց թէ գրաւոր և թէ բանիւ և վերաբերէք ի վերայ այնոցիկ վկայութեանց խանին թէ ի վերադառնալն ձեր ի Մակուայ հարցումն արարեալ յաղագս արկեղան դրամոցն ի ծառայէ հանգուցելոյն ծածկաբար բերելոց առանց բանալոյ ըստ գրաւոր վկայութեանց քահանայից և ժողովրդոց Մուժամբար գեղջ որոց զպատճէնս առաքեալ էք մեզ ի 5 հոկտ. ամին անցելոյ համարաւ 92, որոց աղագաւ գրեալ էին մեզ ըստ ձերում նշանակելոյ ի ամին ձերում գրութեան Աղա Առաքելն և այլք և վասն մամնաւոր հարցմանցն ձերոց նշանակեալ էիք թէ հարցիք ի ներկայութեան պարոն Յարութիւնի Ոսկանեան ռակերչի Ալի խանին որ ի կողմանէ նորա աստ գտաւ ասէք առ ի տեսութիւն իրողութեանցն ի ներկայութեան Ոէս Միրզայի և այլոց տանուտերաց և իշխանաց գեղջն վանից որոց զկնի հետեւեցուցանէք զգրութիւնս ձեր վասն տալոյ ձեզ երկուց եղբարցն վերոյիշեցելոց զձեռագիր խերեանց յաղագս չունելոյ ինքեանց տարեալ զինչ ինչ վանիցն իսկ ընդդէմ նոցուն բանից լսելոյ ձեր վկայութիւնսն երիս առ երես ձիապանի հանգուցելոյն յորում գայր բազում դրամս յետ որոյ խոստացաւ նա տալ ընդ որոյ գնացեալ Թադդէոս քահանայն և եղբօր Սարգսին և ուստա Յարութիւնին և ընդ ծառայի ձեր Ավդալայ Թոմասեան զպահեալսն Յովսէփայ հանեալ ի գոմէ նորին ի ներքոյ մսրոյն բերեալ ներկայացուցին ձեզ երկերիւր տասն և ութն թուման որք էին զանազան դրամք յետ որոյ ոչ ևս տեսեալ զնոսա ձեր Սրբազնութիւն թողիք առնել ըստ մերոյ կամաց։ Սակայն բազումք են որք վկայեն Թաւրիզեցիք և այլք թէ ունէր հանգուցեալն զբաւական դրամ զի Թադդէոս խանն Առաքելեան տուեալ էր հանգուցելոյն վասն շինութեան զանգակատանն երեք հարիւր թուման որպէս Սիմէոն վարդապետն Տէր Դաւթեան ի լինելն ձեր աստէն յէջմիածին պատմեալ է ձեզ, և մեզ ևս յառաջագրեալ էիք լսել ի նմանէ վասն ամենայն հարստութեանց Նիկողայոս եպիսկոպոսի, զոր ասեն թէ կողոպտեալ են երկոքին եղբարքն, կողոպտեալ են նոյնպէս և հարստութիւն վանիցն, և թողեալ են զվանքն թափուր յամենայն ընչից իւրոց, որոց աղագաւ ըստ երդմամբ վկայութեանց նշանակեալ անձանցն զգործ արարեալ մատուցեալ էք մեզ ընդ այսմ գրութեան ձերում զի ընթերցեալ զայնս առնել ունիցիմք մեք զանօրէնութիւն զի թերևս իր ինչ գոյացի սակս շինութեան և նորոգութեան քայքայեալ վանիցն որոց զխաղտութիւնն մանրամասն նկարագրութեամբ ցուցանէք մերձ ի կործանումն և այնպիսի ծանօթութեամբ վասն յափշտակութեանց հարստութեանցն վանից և հանգուցեալ Նիկողայոս եպիսկոպոսի ա-*

առաքէք մեզ զտոմար կայից վանիցն զոր ժողովեալ էք աստի և անտի ի մի վայր նաև ծանուցանէք վասն վճարելոյ ձեր ըղհարկն վանքի գիւղացւոց հարիւր թուման Թաւրիզոյ ի վճար հարկի անցելոյն ամայ։

Հասեալ են առ մեզ և գրութիւնք ձեր ի 22 այնմ Դեկտեմբերի համարաւ 247 որով յայտնէք թէ հետ գրութեան ձեր ի 15 Դեկտեմբերի հանեալ էք ի հօրոյն ցորենոյ Սիմոնի Մանուկեան երկու չըվալով և յամբարանոցէ տան Նաւայի Ոսկանեան, և տոմարագրեալ զայնս ի 21 Դեկտեմբերի առաջի առնէք մեզ ընդ առաջնոյն որ համարի լինել ցուցակագրութեան Եկեղեցական իրաց առաքելոյ ընդ գրութեան ձեր ի 15. Դեկտեմբերի կի ցուցակն եղեալ ընդ սմին վասն զօղունեաց գրեալ գտանի ի 23 այնմ Դեկտեմբերի մակագրեալ պտտճէն զողացեալ կայից Յովսէփայ Թադդէոսեան որոց առաջին 1. Նոմերայն գրեալ գտանի մի կանացի վերնոց հէքած առացեալ 2 համարն ի վերայ հեքալին երեք սաղ զաջի. 3 համարն մի կանաչ չադաք կապոց 4. մի զումի չիթ ալխալուխ, 5. մի կանաչ չադաք ալխալուխ, 6. մի փափախ, 9. մի չալամայ գօտի, 10. մի թափ արգիստի չիթ, 11. մի չավլուխ, 16. մի չալ հակրայ, 19. վեց զազ չիթ, 20. ութ զազ ամերիկայ կտաւ, 21. երկու զազ չիթ, 22. տասնեւերկու զազ չթի կտորանք, 27. մի ջուխտ տօլախ, 28. մի սև արայ զորս դարձուցեալ էք Յովսէփին Թադդէոսեան։ Իսկ արտաքոյ այսմ ցուցակագրի որ գրեցեալ է ի 23 Դեկտեմբերի 1851 ամի, զոր և այլք ցուցակք իրաց գրեցեալք յետ վախճանի Նիկողայոս եպիսկոպոսին յամի 1850, ի 11 Յուլիսի առանց ամսաթւոյ նշանակեալ ի ներքոյ ինչ ինչ իրաց թէ ստացաք և ի ներքոյ ինչ ինչ իրաց թէ վաճառեալ է, և ի գլուխս ինչ ինչ իրաց գրեալ են թէ զկնի վախճանի Թադդէոս վարդապետի միաբանից վանաց ի խցէ նորա և ի վանից տարեալ են Տէր Թադդէոս և եղբայր նորա Յովսէփն և ի գլուխս ինչ ինչ իրաց թէ տարեալ է Թադդէոս քահանայն զորոց զնախագաղափարն ունիք դուք։

Յաղագս երեք հարիւր թումանի զորմէ վկայեն ոմանք թէ տուեալ է վասն չինութեանց զանգակատանն վանից, Սրբազան Սիմէօն եպիսկոպոսն Տ. Դաւթեան բաւական այլևայլ պատմութեամբ վկայէ թէ չէ տրեցեալ լոկ այն գումար երեք հարիւր թուման այլ գնեալ է վասն վանիցն մի արտ սերմանեցեալ յայլոց հատուցանելով սերմանողին զծախսն նորա, կի վասն վանքին հնձեալ զայն կերիցեն միաբանք վանիցն գնեալ է և զմի զոյգ գոմէշ վասն վանիցն և չէ հատուցեալ սրբազան Նիկողայոս եպիսկոպոսին լոկ զդրամ երեք հարիւր թուման այլ բաւական պակաս, քան զգրուածն երեք հարիւր թումանի։

Եւ յաղագս այսպիսի զանազան տարակուսական ծանօթութեանց հարկագրեալ զտաք օրինաց կանոնաւորեալ վերազննութեանց կարգել զժողովական միաբանութիւն քննչաց առ որ ի սոյն թիւ ամսոյ գրեալ զկոնդակ համարաւ 360 առ Յովսէփ Զարբայիլ և Մարգար խանան, և առ պատուարժան Մահտեսի Սիմոն Գէորգ Եղիազարեան, Աւետիս մահտեսի Անանեան Յարութիւն Բարաջանեան, մահտեսի Խաչատուր մահտեսի Պետրոսեան խնդրեցաք նոցա ունել ընդ իւրեանց միաբանութեան նաև զպատուարժան հարազատն մեր Աղա Առաքելն մելիք Մինասեան և զՏէր Գաբրիէլ աւագ քահանայն և զերեցփոխանն եկեղեցւոյ Աւագ Հայրապետեան արասցեն զքննութիւն վասն ի ժամանակի կենդանութեան Նիկողայոս եպիսկոպոսի գտանեցեալ զհարստութեանցն հանգուցելոյն անձնականաց և վանիցն սեփհականաց և ըստ այնմ հանճարաւոր խորհրդածութեամբ հաստ լինել իսկութեանցն ձեօք մեզ յայտնեցեալ տարաձայնութեանց վասն հարստութեանց ստուգելոյ վանիցն սեփհականաց և անձնականացն հանգուցելոյն յետրոյ բաւական զիւրութեամբ կարելի գտանի տեղեկանալ իսկապէս վասն պակասեցլոյն յայնցանէ գործադրութեամբ վասն վանիցն և պակասեցելոյն յայնցանէ յափըշտակութեամբ գործավարաց հանգուցելոյն Թադդէոս քահանայի և եղբօր նորա Յովսէփա Թադդէոսեան առանց որոց բացայայտ հաստատութեանց ոչ ներեն օրէնք արժանաւորութեանց անուանել զոք՝ զող, կամ յափշտակող, և ոչ բնաւ ընդարձակեն զիշխանութիւնն հոգևորական կամ քաղաքական կառավարութեանց զատապարտել կամ պատուհասել ըստ կարծեաց զոք։

Գրեալ եմք և առ Աղա Առաքելն մելիք

Մինասեան զի ինքն ևս ունելով ընդ իւր ըզ-Գաբրիէլ Աւագ քահանայն և զպատուարժան երեցփոխանն եղիցի Նոցա աշխատակից վասն պարզաբանելոյ զխնդրութիւնն զրաւոր կամ բանաւոր հաշւակաց հոգևորականաց և ժողովրդականաց և ըստ այնմ տնօրինել զարժանն ըստ իրաւանց և արդարութեանց։

Ժամանեալ են առ մեզ ի 4 Մարտի համարաւ 40. յաղագս խնդրագործութեանցն ի ձէնջ մահտեսի Առաքելի Յովհաննիսեան և եղբօր որդւոց Նորա Սահակայ և Մինասայ մահդեսի Թորոսեան բնակչաց ի քաղաքագեօղն Սալմաստայ նահանգի որոց խնդրանացն համաձայն ոչ զանց արարցուք առնել զհոգունակութիւն ի ժամանելն մեր ի Թիֆլիզ ուր ճանապարհորդեսցուք հանդերձ Աստուծով յառաջիկայս եօթնեկի։ Նաև զգրութիւն ձեր ի 10 Մարտի համարաւ 43 ընկալեալ եմք զորմէ տնօրէնութիւն կախի ի բարձրագոյն իշխանութենէ Տէրութեան. ընկալեալ եմք և զգրութիւն ձեր ի 10 Ապրիլի ի պատասխանի գրութեանցն մերոց համարաւ 85. յաղագս անցիցն ընդ Յովսէփ խանին Մովսէսեան Նաև զգրութիւն ձեր ի 20 Օգոստոսի համարաւ 92, վասն առաքելոյն առ մեզ զթեթևամիտ տղայն Թաւրիզեցի զոր ունիմք առ մեզ։ Ընկալաք և զգրութիւն ստորագրութեամբ Տ. Գաբրիէլ աւագ քահանայի և Տ. Յովսէփ քահանայի Տ. Յովսէփեան Առաքել աղայի Մելիք Մինասեան երեսփոխ աւագի Մելիք Աբրահամեան գանձապետ Մատթէոսի Մովսէսեան։ Ծերունի Գրիգորեան և Գրիգորի Մալեանց առ որ գրեմք ձեզ զի Նորոգ կարգադրութիւն Տէրութեան որ գրեալ գտանի վասն հանգուցեալ հոգեւորականաց առանց կտակի թողեալ ստացուածոցն լինելոյ պատկանեալ ժառանգաւորաց հանգուցելոյն և ոչ վանօրէիցն որոց գտանիլնն նոքա որդեգըրեալք։ Ամենայն կանոնք յայնմ Նորոգ կարգադրութեան ունին Նախագրութիւն ի գլուխս այնոցիկ կարգադրութեանց այսպէս Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց ի Ռուսաստան։ Ըստ որոյ այն կանոնք արտաքոյ Ռուսաստանի մնան առանց գործադրութեանց ի Ներքոյ համազգական Նախնական օրինագրութեանց Հայկազանց առ որ գրեմ ձեզ ոչ բնաւ ունել զգայթակղութիւն այլ կալ հաւատարի թէ ամենայն մնացեալքն յետ վախճանի Նիկողայոս եպիսկոպոսին պատկանեալքն Էջմիածնի ունին մնալ Էջմիածնի և պատկանեալքն վանից Ս. Թադէոս Առաքելոյն ունին մնալ այնմ վիճակային վանից։ Եւ ոչ անագան այնոցիկ կանոնաց փոփոխութիւնք գոլով յանձնեցեալ մեզ բարձրագոյն կամօք մերով անձեռնհասութեամբ թէպէտև գտանի անկատար մինչև ցայժմ այլ ի գնալն իմ ի Թիֆլիզ յայս Նուագ փոխադրեցից զամենայն զմնաստակարսն մերում եկեղեցական կառավարութեանց կարգաւորեսցուք կայսերական բարեհաճութեամբ զնորոգ կանոնս. ըստ պարգևելոյ շնորհաց Աստուծոյ առաւել զգուշութեամբ վասն օգտակարացն ազգի և եկեղեցւոյ և Աթոռոյ Էջմիածնի և ամենայն վանօրէից։ Ընկալաք և զգրութիւն ձեր ի 15 հոկտեմբերի համարաւ 115, յաղագս հարուածոց խօլերայի ոյր աղագաւ ամենեքին միաբան պարտաւորեմք աղաչել զօժանդակութիւն Աստուածային ողորմութեանց։

Յամի ազգական 1301, և փրկչական 1852
Համ. 382. Նոյեմբեր 29 ի Ս. Էջմիածին

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՆԵՐՍԷՍ

(9) Հրատ. Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

## «ԺՈՂՈՎԵՑԷՔ ԶՆՇԽԱՐԵԱԼ ԲԵԿՈՐՍՆ ԶԻ ՄԻ՛ ԻՆՉ ԿՈՐԻՑԷ»

### ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼՔ

Տ. Առողիկ Վրդ. այս տարի, Զատկական տօներու առթիւ գացած է մինչեւ Ռուսական սահմանագլուխը, Մանչուրի եւ Հայլար քաղաքները, ուր ցարդ չէր կրցած երթալ, քաղաքական վիճակին պատճառաւ: Առաջին քաղաքին մէջ Ռուսերը ունին երեք եկեղեցիներ. հոն կան 57 Հայեր, մեծ ու փոքր, տնտեսապէս աննախանձելի, բայց սրտի տէր մարդիկ. երբ կառաշարէն վար կ'իջնէ, ամբողջ Հայ գաղութը իրենց ի գլուխ ունենալով տեղւոյն Ռուս քահանաներէն մին, զինքը կ'առաջնորդեն դէպի Ռուսաց Մայր եկեղեցին. ուր առաջին անգամ ըլլալով կը հաղորդէ Ազգին եւ Եկեղեցւոյ ողջոյնն ու օրհնութիւնները եւ պահպանիչով կ'արձակէ ժողովուրդը:

Այդ տեղ կը կատարէ պատարագ եւ մկրտութիւն սոյն Եկեղեցիի մէջ, տնօրհնէք, գերեզմանօրհնէք եւ հինգ երախայ կը մկրտէ, որոնց ամենէն մեծը 16 տարեկան տղեկ մը: Այդ տեղ հիւրասիրուած է Մկրտիչ Սուրէնեան անուն Ախալցխացի ազգայինի մը տունը: